ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ. ՇԻՐԱԿ, ԼՈՌԻ, ՏԱՎՈՒՇ

“Community Poverty Reduction “Know How”” project
«Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» ծրագիր

Ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների շրջանակը

Հունվարի 13, 2023թ., Երևան

Հետազոտության նպատակը և խնդիրները

- Հետազոտության նպատակը Հայաստանում, մասնավորապես՝ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում բազմաչափ աղքատության կրճատմանն ուղղված պետական բյուջետային ծրագրերի և դրանց ազդեցությունների ուսումնասիրումը և քննարկումն է:

- Հետազոտության հիմնական խնդիրներն են՝
  - Ծրագրի շահառու խմբերին ուղղված ռազմավարական քաղաքականությունների շրջանակի ուսումնասիրումը և քննարկումը,
  - Ծրագրի շահառու խմբերին ուղղված պետական բյուջետային և համայնքային ծրագրերի վերլուծությունը, դրանց աղքատամետության և ազդեցությունների քննարկումը,
  - Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում շահառու խմբերի կարիքների ուսումնասիրումը,
  - Իրականացվող բյուջետային քաղաքականությունների և շահառու խմբերի կարիքների համապատասխանության քննարկման հիմքերի ստեղծումը, լուծում պահանջող խնդիրների բացահայտումը:

Հետազոտության մեթոդը

- Ռազմավարական քաղաքականությունների շրջանակի ուսումնասիրում
  - բազմաչափ աղքատության տարբեր բնութագրերի վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող քաղաքականություններ,
  - քաղաքականությունների նպատակներ, վերջնական արդյունքներ և արդյունքային չափորոշիչներ թիրախներ
- Պետական բյուջետային ծրագրեր ուսումնասիրում
  - բազմաչափ աղքատության վրա պոտենցիալ միջամտություններ և ազդեցություններ ենթադրող պետական բյուջետային ծրագրեր/միջոցառումներ,
  - բյուջետային ծրագրերի ուղղակի և վերջնական արդյունքներ և ֆինանսավորման ծավալներ
- Շահառու մարզերի համայնքային բյուջեների ուսումնասիրում
  - համայնքային բյուջետային ծախսերի գործառական բաշխում և սուբվենցիոն ծրագրեր
- ՏՏ-ների վիճակագրական ընտրանքային հետազոտություն՝ «Բյուջեներ և բնակչության բերեկեցություն»
  - Շահառուների իրազեկվածության
  - Հանրային ծառայությունների օգտագործում, հասանելիություն և կարիք:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Պետական բյուջետային ծրագրերի քանակը և ֆինանսավորման ծավալները 2019-2022թթ.

Պատասխանատու գերատեսչություն	2019		2020		2021		2022*		
	քանակ	մլրդ դրամ	քանակ	մլրդ դրամ	քանակ	մլրդ դրամ	քանակ	մլրդ դրամ	կշիռը, տոկոս
ՀՀ ԱՍՀՆ	16	454.0	17	548.3	17	619.8	16	589.9	26.5
ՀՀ ՏԿԵՆ	26	171.6	22	178.2	22	201.4	24	267.6	12.0
ՀՀ ԿԳՄՍՆ	23	157.3	20	170.9	21	174.8	21	226.5	10.2
ՀՀ ԱՆ	12	97.6	13	141.8	12	157.9	12	141.4	6.3
ՀՀ ԷՆ	14	12.5	14	34.0	14	43.4	13	61.5	2.8
Այլ պետական մարմիններ	109	736.4	93	821.5	89	807.0	91	940.5	42.2
Ընդամենը	200	1,629.4	179	1,894.6	175	2,004.3	177	2,227.3	100

Բազմաչափ աղքատության վրա ազդեցության պոտենցիալ ունեցող բյուջետային ֆինանսավորման ծավալները, 2022թ.

Հիմնական կարիքներ	118,904 մլն դրամ	31,1%
Բնակարանային պայմանների բարելավում	34,619 մլն դրամ	9,1%
Կրթության կարիք	134,785 մլն դրամ	35,3%
Աշխատանքի և զբաղվածության կարիք	1,856 մլն դրամ	0,5%
Առողջապահության կարիք	91,853 մլն դրամ	24,0%

Ընդամենը
382,017
մլն դրամ

Ընդամենը
17.2%
պետական բյուջեում

Բազմաչափ աղքատության վրա ազդեցության պոտենցիալ ունեցող բյուջետային ֆինանսավորման ծավալները, 2020-2022թթ.

Բազմաչափ աղքատության բնութագրեր	2020	2021	2022*	2022
		մլն դրամ		տոկոս
Հիմնական կարիքներ	99,176	110,599	118,904	31.1
Բնակարանային պայմանների բարելավում	27,979	29,426	34,619	9.1
Կրթության կարիք	103,998	108,875	134,785	35.3
Աշխատանքի և զբաղվածության կարիք	1,942	1,702	1,856	0.5
Առողջապահության կարիք	78,822	90,605	91,853	24.0
Ընդամենը, մլն դրամ	311,917	341,207	382,017	100
Ընդամենը, տոկոս պետական բյուջեում	16.5	17.0	17.2	

Հիմնական կարիքներին ուղղված բյուջետային ծրագրերը և շահառուները





- Անապահով սոցիալական խմբերին աջակցություն
- Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ
- Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողին նպաստի տրամադրման ապահովում և տրամադրում
- Երեխայի ծննդյան միանվագ նպաստ
- Դրամական աջակցություն ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին
- Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց
- Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում
- Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն
- Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն

Հիմնական կարիքներ. Ռազմավարական նպատակադրումներ

- Մինչև 2026թ. վերացնել ծայրահեղ աղքատությունը
- Բազմաչափ աղքատության մասնաբաժինը նվազեցնել տարեկան առնվազն 2%-ով
- Երեխաների շրջանում վերացնել սպառման ագրեգատի հիմքով ծայրահեղ աղքատությունը
- Բազմաչափ աղքատության մեջ ապրող երեխաների մասնաբաժինը նվազեցնել 2020թ. 20%-ից մինչև 12%
- Ավելացնել հմպտ. զարգացման, առողջության, ուսման և հոգեսոցիալական մակարդակ ունեցող 4-59 ամսական երեխաների մասնաբաժինը
- 6-23 ամսական երեխաների շրջանում ընդունելի նվազագույն սննդակարգ ստացող երեխաների կշիռը 2021թ. 45%-ից հասցնել առնվազն 65%-ի
- Գլոբալ պարենային անվտանգության ինդեքսի բարելավում՝ 2024թ. մինչև 65.3 մակարդակ՝ 2019-ի 52.3-ի դիմաց
- Նպաստների համակարգի հասցեականության մակարդակի տարեկան աճ 5%-ով
- Մինչև 2026թ. նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնել հմպտ. պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին
- Մինչև 2023 թ. հանրապետության բոլոր մարզում ներդնել տնային խնամքի ծառայությունը
- Խնամքի ծառայությունների կարիք ունեցող՝ բնակարանով ապահովված տարեցների առնվազն 80 տոկոսին ընդգրկել տնային խնամքի ծառայություններում:

- *ՀՀ կառավարության 2021-2026թթ. Ծրագիր*
- *ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026թթ. ռազմավարության նախագիծ*
- *«Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարություն*
- *ՀՀ գյուղատնտեսական ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ. ռազմավարություն*
- *Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023թթ. համալիր ծրագիր*
- *Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիր*

Բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված բյուջետային ծրագրերը և շահառուները

Չափորոշիչ	2021	2022*
Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում, շահառուների թիվ	63	55
Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն, շահառուների թիվ	1,949	9,224
«Երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարաններ» պետական նպատակային ծրագիր, շահառուների թիվ	5,475	6,825
ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով, բնակավայրերի թիվ	225	228
Հիմնանորոգվող ճանապարհներ, կմ	55.8	67.8
Նորոգվող ջրագծերի երկարություն, կմ	210.76	306.1
Նորոգվող կոյուղագծերի երկարություն, կմ	2.67	9.1



- Բնակարանային ապահովում
- Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն
- Աջակցություն երիտասարդ ընտանիքներին
- Էներգաարդյունավետության ծրագիր
- Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում
- ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիր

Կրթության կարիքին ուղղված բյուջետային ծրագրերը և հիմնական արդյունքային ցուցանիշները





- Հանրակրթության ծրագիր
- Ապահով դպրոց
- Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր

Կրթության կարիք. Ռազմավարական նպատակադրումներ

- Մինչև 2026թ. կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 300 դպրոց
- Մինչև 2026թ. կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 500 մանկապարտեզ և նախակրթարան
- Մինչև 2026թ. նախադպրոցական հաստատություններում ընդգրկված 3-5 տարեկան երեխաների կշիռը հասցնել առնվազն 85 տոկոսի
- Բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայությունները
- Դպրոց ընդունվող բոլոր երեխաները առնվազն մեկ տարի ընդգրկված կլինեն նախադպրոցական ծրագրերում
- 3-5 տարեկանների առնվազն 95 տոկոսը ընդգրկված կլինի նախադպրոցական ծառայություններում
- Բոլոր խոշորացված համայնքներում կգործեն մսուրի ծառայություններ,
- Բոլոր դպրոցները կունենան պատշաճ կահավորված և արդիական սարքավորումներով հագեցված, սանիտարահիգիենիկ, անվտանգային ստանդարտներին բավարարող և համընդհանուր մատչելի շենքեր,
- Բոլոր դպրոցները համալրված կլինեն որակավորված և սահմանված ստանդարտներին համապատասխան ատեստավորված մանկավարժներով, որոնք կստանան արժանապատիվ վարձատրություն,
- Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից:

- *ՀՀ կառավարության 2021-2026թթ. Ծրագիր*
- ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի նախագիծ

Աշխատանքի և զբաղվածության կարիքին ուղղված բյուջետային ծրագիրը

- Զբաղվածության ծրագիր
- Նպատակը - բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծումն է:
- Վերջնական արդյունքի ցուցանիշը - գործազուրկի կարգավիճակ ստացածների թվաքանակում՝ ծրագրում ընդգրկված անձանց տեսակարար կշռի աճը մինչև 58 տոկոս 2024 թվականին՝ ելակետային 41.7 տոկոսի դիմաց







Աշխատանքի կարիք. Ռազմավարական նպատակադրումներ

- Մինչև 2026թ. նվազագույն աշխատավարձը սահմանել 85,000 դրամ,
- Աշխատուժի մասնակցության մակարդակը 2020 թվականի 58.5-ի համեմատ հասցնել 65%-ի,
- Չսովորող ու չաշխատող երիտասարդների մասնաբաժինը 2020 թվականի 31.1%-ի նկատմամբ իջեցնել՝ հասցնելով 18%-ի,
- Գործազրկության մակարդակը հասցնել 10%-ի
- Տնտեսական մասնակցության և հնարավորությունների ցուցանիշը 0.66-ից դարձնել 0.8,
- Աշխատանքային տարիքի և հաշմանդամություն ունեցող աշխատունակ անձանց շրջանում զբաղվածների տեսակարար կշիռն ավելացնել առնվազն 3%-ով,
- Աշխատանքային պայմաններից գոհունակության մակարդակի աճ առնվազն 30%-ով,
- Կենսաթոշակային տարիքի զբաղվածների մասնաբաժինը կենսաթոշակային տարիքի բոլոր անձանց շրջանում 2020թ. 17%-ից բարձրացնել մինչև 20%,
- **Զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկված անձանց շուրջ** 50%-**ի կայուն զբաղվածության ապահովում**,
- Արհմիությունների ներգրավվածության և դերի բարձրացում. հարցվածների 60%-ը դրական է գնահատում արհմիությունների գործունեությունը,
- Հարցվածների առնվազն 60-ը լավատեղյակ է իր աշխատանքային իրավունքներից և պարտականություններից,
- Նպաստառու ընտանիքներում զբաղվածության մակարդակի տարեկան աճ առնվազն 5%-ով,
- Ակտիվ ծերության գործակիցը բարձրացնել առնվազն 10%-ով,

- *ՀՀ կառավարության 2021-2026թթ. Ծրագիր*
- *ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026թթ. ռազմավարություն, նախագիծ*
- *«Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարություն*
- *Զբաղվածության կարգավորման 2022թ. պետական ծրագիր և միջոցառումների ցանկ*
- *ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարություն*

Առողջապահության կարիքին ուղղված բյուջետային ծրագրերը և հիմնական արդյունքային ցուցանիշները

Չափորոշիչ	2021	2022*
Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	259,873	182,707
Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	57,361	62,469
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	28,866	12,377
Հղիների նախածննդյան և հետծննդյան հսկողության ընթացքում իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների թիվ	701,232	874,000
Ամբուլատոր-պոլիկլինիկական, դիսպանսերային և հիվանդանոցային բժշկական հաստատությունների միջոցով անվճար դեղորայք ստացող հիվանդների թիվ	199,679	267,175
Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	51,631	53,400
Երեխաների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թիվ	89,889	89,700
Շտապ բժշկական օգնության գծով կանչերի թիվ	571,438	550,000
Մարզեր ուղեգրված բժիշկների թիվ	9	50



Ծրագիր/միջոցառում	2022* մլն դրամ
• Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	35,039
• Առողջության առաջնային պահպանում	28,433
• Դեղապահովման ծրագիր	3,880
• Մոր և մանկան առողջության պահպանում	19,602
• Շտապ բժշկական օգնություն	4,800
• Բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցում	100
Ընդամենը	91,853

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ

Մեկ շնչի հաշվով համայնքային ամփոփ եկամուտների մակարդակը և աճը



Համայնքների սեփական եկամուտների կշիռը համայնքային ամփոփ եկամուտների կառուցվածքում



Համայնքային ամփոփ բյուջեների ներքին դրամաշնորհների կառուցվածքը, 2021 և 2022 թվականներ





Պետական սուբվենցիաների ծավալների համեմատական՝ 2019-2022թթ., մլն. դրամ



Շահառու մարզերի սուբվենցիոն ֆինանսավորումը, 2021 և 2022 թվականներ, մլն դրամ



Շահառու մարզերում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը, 2021 և 2022 թվականներ, մլն դրամ



Համայնքային բյուջեների ամփոփ ծախսերի կառուցվածքը, տոկոս



Հիմնական եզրակացություններ

- Համայնքներին բնորոշ է եկամուտների գեներացման ցածր տնտեսական ներուժ,
- Սեփական եկամուտների կշիռը թեև դրսևորում է աճի վարքագիծ, սակայն շահառու մարզերն աչքի են ընկնում սեփական եկամուտների ցածր մակարդակով,
- Համայնքներում խիստ ցածր է ֆոնդահայթայթման և տարբեր զարգացման ռեսուրսներից օգտվելու կարողությունները,
- Ռազմավարական քաղաքականությունների շրջանակը հաճախ է թերանում սահմանել նպատակների չափման և ձեռք բերման համար համապատասխան չափորոշիչներ և թիրախային մակարդակներ,
- Իրականացվող բյուջետային ծրագրերը միշտ չէ, որ ընդգրկում են համապատասխան քաղաքականություններով սահմանված նպատակները և արդյունքները, և նպաստում դրանց իրականացմանը,
- Ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների բովանդակության շուրջ հանրային երկխոսությունը կրում է ոչ բավարար որակ,
- Աստիճանաբար աճում է ՔՀԿ-ների դերը և ակտիվ մասնակցութան կարևորությունը թե՛ բյուջետային ծրագրերի, թե՛ քաղաքականությունների իրականացման մոնիտորինգի և գնահատման գործընթացներում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ